ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2017թվականի N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստան Հովսեփյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգետարածքի թիվ 80 հասցեի հողամասում 1988 թվականին ինքնակամ կառուցված S=67,82 ք.մ. մակերեսով շինությունների օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, «Ս.Աբրահամյան» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1. Հայաստան Հովսեփյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի այգետարածքի թիվ 80 հասցեի հողամասում 1988թվականին ինքնակամ կառուցված S=67,82 ք.մ. մակերեսով շինությունները համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=41.74 ք.մ.մակերեսով շինության հիմքը, S=13.87 ք.մ.. մակերեսով ջրավազանը, S=8.40 ք.մ.մակերեսով հենապատը և S=3.81ք.մ մակերեսով պարիսպը կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, , ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Հայաստան Հովսեփյանին պատկանող 0,05000հա մակերեսով, 07-051-0140-0030 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել իրավաբանական հասցե. գ.Նուռնուս, ,,Դարանի,, թաղամաս, 11-րդ փողոց, թիվ 80:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

07 օգոստոսի 2017թ
գ Նուռնուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2017թվականի N52-Ա

ՎԱՐԴԱՆ ԱՐՏՈՒՇԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի, ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով Վարդան Արտուշի Ստեփանյանի՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 4ա հասցեի հողամասում իրեն կողմից 1988, 1989 և 2004 թվականներին ինքնակամ կառուցված 316,81 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները և այգետնակը օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի,«Գույքաչափ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1 Վարդան Արտուշի Ստեփանյանի կողմից իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 4ա հասցեի հողամասում (գործառնական նշանակությունը – բնակելի կառուցապատման, նպատակայինը՝ բնակավայրերի) 1988, 1989 և 2004 թվականներին ինքնակամ կառուցված 316,81 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները և այգետնակը համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=66,13 ք.մ.մակերեսով այգետան նկուղը, 52,69 ք.մ.մակերեսով 1-ին հարկը, 30,5 ք.մ. ու 36,21ք.մ. մակերեսներով բաց պատշգամբները, 7,19ք.մ. ու 1,66 ք.մ.մակերեսներով աստիճանավանդակները, 33,84 ք.մ.մակերեսով ձեղնահարկը, 27,47 ք.մ.մակերեսով լողավազանը , 20,16 ք.մ.մակերեսով ծածկարանը և 25,8 ք.մ.մակերեսով լողավազանն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3.Հաշվի առնելով, որ S=20,16 ք.մ.մակերեսով ծածկարանը, S=3,51 ք.մ.մակերեսով զուգարանը, S=9,02 քմ մակերեսով խորդանոցը և S=2,63 ք.մ.մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2004 թվականին, ապա նրանց օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 23311 /քսաներեք հազար երեք հարյուր տասնմեկ/դրամ:

4. Ճանաչել Վարդան Արտուշի Ստեփանյանի սեփականության իրավունքը վերջինիս պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Կոտայք,, այգեգործական ընկերության թիվ 4ա հասցեում գտնվող 500քմ մակերեսով մինչև 20% ավել օգտագործվող 30,16քմ հողամասի նկատմամբ՝ այն անհատույց տրամադրելով իրեն.

5.Հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նուռնուս համայնք, ,,Կոտայք,, թաղամաս, 1-ին փողոց թիվ 4:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 30-օրյա ժամկետում վճարումը կատարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ.Նուռնուս
07 օգոստոսի 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2017թվականի N53-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով նոր հասցե տրամադրելու վերաբերյալ Արա Կոլյայի Հարությունյանի դիմումը , որոշում եմ.

1. Նուռնուս համայնքի վարչական տարածքում գտնվող, Արա Կոլյայի Հարությունյանին պատկանող բնակավայրերի հողատեսքի, բնակելի կառուցապատման, Նուռնուսի այգեգործական զանգվածի ,,Ակունք,, այգեգործական ընկերության 15-րդ թաղամասի թիվ 28 հասցեի 0.0478 հա մակերեսով, 07-051-0142-0050 կադաստրային ծածկագրով հողամասին և այգետանը տալ նոր իրավաբանական հասցե.

Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նուռնուս համայնք ,,Դարանի,, թաղամաս, 15-րդ փողոց , թիվ 28:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ.Նուռնուս
09 օգոստոսի 2017թ.